

Նախկին դարերուն կային աղանդաւորներ՝ որոնք պիղծ կը համարէին միսը, ինչպէս Մանիքեցիք, Մոնտանեանք եւ ուրիշներ: Ողջամիտ քրիստոնեայք Առաքելոյն հետ կը մերժէին այդ միտքը: Բայց եւ այնպէս ասոցմէ շատեր եւս, մանաւանդ ջերմ աշխարհաց բնակիչներէն, կամաւորապէս կը հրաժարէին մսէ եւ գինիէ, ինչպէս Գ դարուն կը վկայէ Որիգենէս (ընդ. կեւս. Ե, 49), եւ մերս Եզնիկ ալ մսին համար (287). այս համոզմամբ՝ թէ «միս եւ գինի (այրեն) զհոգիսն շարժմամբ ցանկութեան» (Յճխ. 86):

Արդ՝ բնական էր որ այս ժուժկալութեան աւելի խստիւ փարէին միանձունք: Յիշեալ կողբացի իմաստասէրը պատասխանելով Մարկիոնեանց հարցման՝ թէ «Ձեր ուխտաւորքն ընդէ՞ր են մսահատք», կ'ըսէ Յաճախապատմի մտօք. «Ձի զսրբութիւնն՝ զոր ի մտի եղին պահել՝ դիւրաւ պահիցեն» (286-7): Պիտոյից զրոց մէջ կը կարդանք՝ թէ գինին եւս ժուժկալ կրօնաւորաց «բնաւ իսկ ատելի է» (Խոր. 468). եւ Եղիշէ կ'ըսէ իւր միանձանց համար՝ թէ գինին «եւ գտանի իսկ ոչ» անոնց միայնանոցաց մէջ (215): Վերջապէս այդ երկու նիւթոց արգելքն ալ միանգամայն կը յիշուի Թաթլոյ կողմանէ՝ թէ